ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԴԵՐԸ ԾՆՈՂ-ԵՐԵԽԱ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Լ. Ն. ՔՈՒՐՔՉՅԱՆ
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԳՊՀ դասախոս
Ա. Վ. ՎԱՀԱՆՅԱՆ
«Հայբուսակ» համալսարանի հումանիտար ֆակուլտետի
մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ասիստենտ

Կարծրատիպերը (ստերեոտիպեր) գիտակցության կառուցվածքի անբաժանելի տարրերն են: Դժվար է պատկերացնել, որ առօրյա կյանքում անձը կարող է ստեղծագործաբար արձագանքել բոլոր իրավիճակներին: Կարծրատիպը խմբի որոշակի կուտակված, ստանդարտացված փորձն է, որն ուսուցման գործընթացի և այլոց հետ շփման շնորհիվ արմատացած է անհատի մեջ, օգնում է նրան կողմնորոշվել կյանքում և որոշակի ձևով ուղղորդում է նրա վարքագիծը: Սակայն կարծրատիպը կարող է լինել ինչպես իրական, այնպես էլ կեղծ: Այն կարող է առաջացնել և՛ դրական, և՝ բացասական ապրումներ՝ արտահայտելով տվյալ սոցիալական խմբի հաստատուն վերաբերմունքը որոշակի երևույթի նկատմամբ:

Մենք բոլորս ապրում ենք կարծրատիպերի աշխարհում: Հենց կարծրատիպերն են զգալի չափով սահմանում բարոյական նորմերը, ձևավորում քաղաքական և աշխարհայացքային կոնցեպցիաները: Վարքագծային կարծրատիպերը շատ բազմազան են և շատ հարցերում որոշում են մեր վարքագիծը, համոզմունքները և վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: Շնորհիվ այդ կարծրատիպերի՝ մենք հստակ գիտենք՝ ինչպես մեզ դրսևորենք այս կամ այն դեպքում: Ճանաչողության մեխանիզմում կարծրատիպերի գոյությունը կրում է երկու՝ միմյանց հակադիր բնույթ: Մի կողմից կարծրատիպերը զգալիորեն հեշտացնում են իմացության գործընթացը՝ թույլ տալով լայնորեն օգտագործել գոյություն ունեցող գիտելիքները և կարողությունները, մյուս կողմից՝ հենց դրանք են սահմանափակում իրենց հակասող կամ իրենց շրջանակներից դուրս եկող նոր հասկացությունների ճանաչման հնարավորությունները:

Ձևավորված կարծրատիպերը շատ կայուն են և հաճախ պահպանվում են մարդու ամբողջ կյանքի ընթացքում, դրանց ոչնչացումը սովորաբար շատ ցավոտ գործընթաց է և իր հետ բերում է անհանգստության զգացում, հոգեկան հավասարակշռվածության խանգարում, նույնիսկ սթրեսային իրավիճակ: Նորի նկատմամբ անտագոնիստական վերաբերմունքը որոշվում է ենթագիտակցական մակարդակում գործող ինքնապահպանման բնազդով, որը փորձում է պաշտպանել մեզ հնարավոր ցնցումներից՝ կապված հաստատված կարծրատիպերի ոչնչացման հետ: Գոյություն ունեն կարծրատիպերի բազմազան տեսակներ: Մասնավորապես առանձնացնում են ավտոկարծրատիպերը, որոնք արտացոլում են մարդկանց պատկերացումները հենց իրենց մասին, և հետերոկարծրատիպերը, որոնք արտացոլում են մեկ այլ ժողովրդի, սոցիալական խմբի մասին պատկերացումները: Շատ կարծրատիպեր մարդիկ ընդունում են որպես օրինակելի օրինակներ, որոնց պետք է պարզապես համապատասխանել: Այդ պատճառով այդպիսի ամրագրված պատկերացումները բավականին մեծ ազդեցություն են գործում մարդկանց վրա՝ խթանելով բնավորության այնպիսի գծերի ձևավորմանը, որոնք արտացոլված են կարծրատիպերում:

Կարծրատիպերը կարող են լինել անհատական և սոցիալական, որոնք արտահայտում են ամբողջ խումբ մարդկանց պատկերացումները: Դրանք կարելի է նաև բաժանել հետևյալ կերպ՝ վարքագծի կարծրատիպեր և գիտակցության կարծրատիպեր: Վարքագծի կարծրատիպերը կայուն սոցիալ-մշակութային խմբի և դրան պատկանող անհատների պարբերաբար կրկնվող վարքագծեր են, որոնք կախված են այդ խմբում գործող արժեքային-նորմատիվ համակարգից և գտնվում են սերտ կապի մեջ գիտակցության կարծրատիպերի հետ: Գիտակցության կարծրատիպերը՝ որպես արժեքային-նորմատիվ համակարգի մասին ամրագրված իդեալական պատկերացումներ, հանդես են գալիս որպես վարքագծի կարծրատիպերում ձևավորման հիմքեր: Գիտակցության կարծրատիպերը ստեղծում են վարքի մոդելներ, իսկ վարքագծի կարծրատիպերը այդ մոդելները ներդնում են կյանք:

Կարծրատիպերի վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել դրանց ինչպես բացասական, այնպես էլ դրական հոգեբանական հետևանքները: Մի կողմից՝ այլ մարդու մասին կարծրատիպից դուրս եկող

դատողությունների համակարգը հաճախ գործում է որպես զգուշացում: Առաջանալով տեղեկատվության պակասի պայմաններում՝ կարծրատիպը հաճախ կեղծ է և խաղում է պահպանողական դեր՝ ձևավորելով սխալ պատկերացումներ տեղի ունեցող իրադարձությունների մասին, ձևափոխելով տեղի ունեցող իրադարձության կամ միջանձնային փոխհարաբերությունների բնույթի մեկնաբանման գործընթացը: Ցանկացած սոցիալական կարծրատիպ, որը ճիշտ է մի իրավիճակում, կարող է համարվել ոչ ճիշտ մեկ այլ իրավիճակում և, հետևաբար, ոչ արդյունավետ շրջապատող սոցիալական աշխարհում անձի կողմնորոշման խնդրի լուծման համար:

Մյուս կողմից՝ սոցիալական կարծրատիպերի գոյությունը կարևոր դեր է խաղում կյանքում այն պարզ պատճառով, որ տեղի ունեցող իրադարձության մասին համակողմանի տեղեկատվության բացակայության դեպքում հնարավոր չէր լինի դրա ո՛չ համարժեք գնահատումը, և ո՛չ էլ դրա կանխատեսումը: Կարծրատիպը թույլ է տալիս խիստ կրճատել փոփոխվող իրականության արձագանքման ժամանակը, արագացնել ճանաչման գործընթացը, պատկերացնել գոնե ինչ-որ մի նախնական հիմք՝ տեղի ունեցող իրադարձությունում կողմնորոշվելու համար: Այն հեշտացնում է ըմբռնումը, օրինակ, որքան տեքստում շատ են կարծրատիպերը, այնքան այն հեշտ է հասկացվում :

Ծնողների վարքը կարող է հանդիսանալ ուրույն չափանիշ, որի հիման վրա երեխաները համեմատում և կառուցում են իրենց վարքագիծը: Ծնող-երեխա փոխհարաբերությունների կառուցման մեջ ակտիվ կողմը հասուն մարդն է՝ ծնողը: Նա նպատակաուղղված կազմակերպում է փոխգործակցումը, ուղղորդում է այն՝ ենթարկելով կոնկրետ նպատակի: Կարևորն այստեղ այն է, թե ինչպիսի պայմանների վրա է ուշադրությունը կենտրոնացնում ծնողը հարաբերությունները կառուցելիս:

Ծնող-երեխա հարաբերությունների և երեխայի մոտ անձնային որակների ձևավորման միջև գոյություն ունի ուղիղ կապ, քանի որ ընտանեկան միջավայրը ծնողների անհատական առանձնահատկությունների, ընտանիքի բնակության պայմանների և դաստիարակության ոճերի համակցություն է:

Երեխաների վրա ազդում են ոչ միայն կանխամտածված և նպատակաուղղված դաստիարակչական ներգործությունները, այլ ավելի շատ ծնողների վարքագծի առանձնահատկությունները: Ընտանիքը

երեխայի համար ստեղծում է սոցիալական վարքի որոշակի մոդելներ: Գնահատելով այն, ինչ տեղի է ունենում հասարակությունում, երեխան, առաջին հերթին, հենվում է մոտ հարազատների հետ շփման փորձի վրա: Հետագայում նա իր փոխհարաբերություններն այլ անձանց հետ կառուցում է՝ զգալիորեն օգտագործելով ընտանեկան հաղորդակցման մոդելները: Ընտանիքում երեխաների սկզբնական սոցիալականացումը հատկապես ծնող-երեխա հարաբերությունների ոլորտում նմանատիպը չունի ռեֆերենտային խմբերի այլ տեսակներում: Եթե նույնիսկ կրթական համակարգը լիներ կատարյալ, այն չէր կարող երեխայի համար ապահովել այն հատուկ ծնողական հոգատարությունը և սերը, որը գոյություն ունի ընտանիքում:

Ընտանեկան փոխհարաբերություններն ընտանիքի անդամների միջև վերապրվող սուբյեկտիվ հարաբերություններ են, որոնք համատեղ կենսագործունեության և շփման արդյունքում օբյեկտիվորեն արտահայտվում են անձանց փոխազդեցության ձևերում: Առանձնացվում են ընտանեկան փոխհարաբերությունների հետևյալ տեսակները.

Դիկտատուրա - ծնողներից մեկի գերիշխող դիրք, որն արտահայտվում է խիստ պահանջների, կանոնների, հրամանների, բռնության, սպառնալիքների և ընտանիքի մյուս անդամների վրա ներգործության այլ միջոցների կիրառմամբ: Ծնողները բախվում են երեխայի դիմադրությանը, որը հարկադրանքին, սպառնալիքներին պատասխանում է իր հակազդման միջոցներով՝ կեղծավորությամբ, խաբեությամբ, կոպտության պոռթկումներով, իսկ երբեմն էլ՝ բացահայտ ատելությամբ: Բայց եթե նույնիսկ դիմադրությունը կոտրվում է, ապա դրա հետ միասին կոտրվում են նաև անձի արժեքային շատ կարևոր որակները՝ ինքնուրույնությունը, ինքնագնահատականը, նախաձեռնողականությունը, հավատն իր և իր հնարավորությունների նկատմամբ:

Խնամատարություն - երեխայի նկատմամբ չափազանց մեծ ուշադրություն, դժվարություններից նրան ազատում, հոգատարություն և անհանգստություն: Երեխայի զարգացումը խոչընդոտվում է, առաջանում է կախվածություն, նա չի կարողանում դիմակայել կյանքի դժվարություններին, ինքնուրույն գործողություններ կատարել, ընդունել որոշումներ: Ծնողներն ըստ էության արգելափակում են հարազատ տանից դուրս իրականության հետ բախվելու՝ երեխաների

պատրաստվածության գործընթացը: Հենց այս երեխաներն են, որ ավելի դժվար են հարմարվում խմբերում:

Խաղաղ գոյակցություն – ծնողների դիրքորոշում, ըստ որի պահպանվում են հետևյալ սկզբունքները՝ երեխաները պետք է մեծանան ինքնուրույն, անկախ, ազատ, հանգիստ: Այդպիսի ընտանիքներում ծնողներն ապրում են իրենց, երեխաներն էլ իրենց կյանքով: Այսօրինակ փոխհարաբերությունների հիմքում ընկած է ծնողների՝ որպես դաստիարակողների պասիվությունը, իսկ երբեմն էլ՝ նրանց հուզական սառնությունը, անտարբերությունը, անկարողությունը և ծնող լինելու ցանկության բացակայությունը:

Համագործակցություն - անձնային մակարդակում ծնողների և երեխաների փոխգործակցում, սիրո, հարգանքի և երեխայի նկատմամբ պահանջկոտության հավասարակշռվածություն: Հենց այս իրավիճակում է հաղթահարվում երեխայի եսասիրական անհատականությունը: Ընտանիքը, որտեղ փոխհարաբերությունների գերիշխող տեսակը համագործակցությունն է, որտեղ ծնողները երեխաների հետ շփվում են որպես անհատների հետ, որտեղ յուրաքանչյուրը կարող է դիմել մեկ ուրիշին խնդրանքով կամ հարցով և ստանալ օգնություն, ձեռք է բերում հատուկ որակ: Այդ պատճառով փոխգործակցության տվյալ տեսակը խթանում է երեխայի ստեղծագործական ակտիվությունը, ձևավորում է փոխըմբռնման պատրաստակամություն, առաջացնում է հոգեբանական անվտանգության զգացում:

Ծնողների հետ շփման երեխայի ներքին պահանջմունքը դրսևորվում է նրանով, որ նա հասակակիցների միջավայրում իր վարքով նմանակում է ծնողների շարժումները, պահվածքը, արժեքային գնահատականները և մտածողության ձևերը: Այդպիսի նմանակումը անվանում են *նույնականացում /իդենտիֆիկացիա/.* երեխան կարծես իր մեջ վերակերտում է ծնողի կերպարը:

Մեծահասակների հետ շփվելիս երեխան հաճախ բարոյական արժեքներն ըմբռնում է կատեգորիկ ձևով՝ աստիճանաբար վերամշակելով և լրացնելով դրանք կոնկրետ բովանդակությամբ, որն էլ և արագացնում է նրանց ձևավորումը և դրա հետ մեկտեղ առաջացնում դրանց ձևական յուրացման վտանգը: Դրա համար կարևոր է, որ երեխան սովորի կիրառել դրանք կյանքում իր և այլոց նկատմամբ: Դա էական նշանակություն ունի, առաջին հերթին, նրա անձնային որակների ձևավորման համար: Որպես

վարքի չափանիշներ՝ նախադպրոցական տարիքի երեխայի համար հատուկ նշանակություն ունեն հեքիաթի հերոսները, որտեղ կոնկրետ կերպարային և իրեն հասանելի ձևով ընդգծված են բնավորության դրական և բացասական գծերը, ինչը հեշտացնում է երեխայի նախնական կողմնորոշումը մարդու անձնային որակների բարդ նկարագրում:

Երեխայի անձը ձևավորվում է աշխարհի հետ իրական փոխազդեցության արդյունքում: Այդ գործընթացը ղեկավարվում է մեծահասակների կողմից, որոնք նպաստում են սոցիալապես կարևոր հատկությունների ընտրությանը և մշակմանը: Երեխայի ինքնուրույնությունը դրսևորվում է այն դեպքում, երբ նա կիրառում է բարոյական գնահատականներն իր և այլոց նկատմամբ ու դրա հիման վրա կարգավորում է իր վարքը: Դա նշանակում է, որ ձևավորվում է անձնային այնպիսի բարդ ֆենոմեն, որն է *ինքնագիտակցությունը*:

Շփվելով մայրիկի և հայրիկի, եղբայրների և քույրերի հետ՝ երեխան յուրացնում է աշխարհի հետ կապը, մտածում և խոսում է այնպես, ինչպես մտածում և խոսում են իր ընտանիքում: Մեծանալով նա կարող է գիտակցաբար չընդունել իր ընտանիքին բնորոշ գծերը, սակայն ենթագիտակցաբար իր մեջ կրել ընտանիքի ներդրած վարքագծի կանոնները և կարծրատիպերը: Այս ամբողջը՝ կյանքի ոճը, հատկությունների, վարքի և ունակությունների յուրօրինակ համադրությունը համակցության մեջ որոշում են երեխայի ճանապարհը դեպի իր կյանքի նպատակները:

Ծնողական դերերի կատարման գործընթացում ամուսինների փոխհարաբերությունները կախված են նրանից, թե ինչպիսի ռազմավարություն ունեն նրանք: Եթե նրանց նպատակը իրենց հարաբերությունների լավացումն ու երեխաների ներդաշնակ զարգացումն է, ապա երեխաների մոտ նրանք հանդես են գալիս «միասնական ճակատով»: Նրանք չեն թուլացնում մոր կամ հոր հեղինակությունը երեխայի աչքերում, պաշտպանում են մյուս ամուսնու պահանջները և գործողությունները: Եվ, հակառակը, ամուսինները կարող են պատերազմել միմյանց հետ՝ դրանում ներքաշելով նաև երեխաներին:

Փորձնականորեն բացահայտվել են դաստիարակչական գործառույթն իրականացնելիս ամուսինների փոխգործակցության տարբեր ռազմավարություններ.

1. Ծնողների ջանքերի համակցություն. մայրը և հայրը միասին գնում են միևնույն ուղիով՝ օգնելով և լրացնելով միմյանց:

2. Հայրը հանդես է գալիս մոր օգնականի դերում (մայրը գլխավոր դաստիարակն է, իսկ հայրը աջակցում և օգնում է նրան):

3. Հայրն օգտագործում է երեխային, որպեսզի ցույց տա իր իշխանությունը և գերակայությունը կնոջ նկատմամբ (օրինակ՝ բացահայտ ծիծաղում է, երբ երեխան չի լսում նրան, կամ հեգնանքով է արձագանքում նրա պահանջների ձևակերպմանը):

4. Մայրը գաղտնի ոչնչացնում է հոր ազդեցությունը երեխայի վրա (հոր բացակայության ժամանակ թույլ է տալիս նրան անել այն, ինչը հայրն արգելում է, կամ նույնիսկ ուղղակի ասում է. «Սպասի՛ր, հայրիկը կգնա, և ես թույլ կտամ միացնել համակարգիչը»):

5. Մայրը միջնորդ է հոր և երեխայի միջև. երեխան և հայրը շփվելու ժամանակ չունեն, կամ նրանք չեն հասկանում իրար, կամ երեխան վախենում է խոսել հոր հետ, և մայրն օգնում է նրանց կարգավորել հարաբերությունները: Այստեղ կարևոր է հիշել՝ իրական ներդաշնակ հարաբերությունները ծագում են ուղիղ շփման դեպքում, այդ պատճառով այսպիսի ռազմավարությունը հնարավոր է միայն որպես ժամանակավոր միջոց:

6. Ծնողներն ունեն երեխայի վրա ազդելու տարբեր նպատակներ (օրինակ՝ մայրը, խղճալով լացող երեխային, մտածում է նրա բոպեական վիճակի մասին, իսկ հայրը, նրա նկատմամբ լինելով խիստ, մտածում է նրա ապագայի մասին) :

Այս տարբեր ռազմավարություններն առաջացնում են փոխհարաբերությունների բազմաթիվ ենթաձևեր ինչպես ամուսինների, այնպես էլ ծնողների և երեխաների միջև:

Բանալի բառեր՝ *կարծրատիպ, ավտոկարծրատիպեր, հետերոկարծրատիպեր, ծնողական վարք, դաստիարակության ոճ, դիկտատուրա, խնամատարություն, խաղաղ գոյակցություն, համագործակցություն, փոխգործակցության ռազմավարություն, իդենտիֆիկացիա, ինքնագիտակցություն:*

Օգտագործված գրականություն

1. Андреева Г.М., Социальная психология / Г.М.Андреева, М. , АСПЕКТ-ПРЕСС, 1999,375 с.

2. Андреева Т.В., Семейная психология: Учебное пособие, СПб, Речь, 2005.

3. Андреева Т. В. , Психология семьи / Т. В. Андреева, М., Речь, 2010.

4. Антонов А.И., Социология семьи. Учебник, - 2-е изд., перераб. и доп., М., ИНФРА , М, 2005, 640 с.

5. Арутюнян М.Ю., Гендерные отношения в семье // Материалы Первой Российской летней школы по женским и гендерным исследованиям «Валдай - 96», М., 1997, С. 56-57.

6. Басс Д., Стратегия выбора партнёра // Сексология: Хрестоматия, СПб., 2000. – 437. с.

7. Бодалев А.А., О социальных эталонах и стереотипах и их роли в оценке личности / А.А. Бодалев, В.Н. Куницына, В.Н. Панферова // Человек и общество: (ученые записки НИИКСИ), Л., изд-во Л. ун-т, вып. 9, 1971.

8. Буренкова Е.В, Хомиченко Е.Н., Влияние идеального образа партнёра на межличностные отношения в парах. // Семейная психология, 2007 г., №1, с. 43-55.

9. Волкова А.Н., Штильбанс В.И., На пороге семьи,Л., Знание, 1989.

THE ROLE OF FAMILY STEREOTYPES IN THE STRUCTURE OF PARENT-CHILD RELATIONSHIP

L. N. KURKCHYAN

PhD in Pedagogical Sciences, Associate Professor

GSU Lecturer

A. V. VAHANYAN

Assistant at the Chair of Pedagogy and Psychology

Faculty of the Humanities, Haybusak University of Yerevan

One of the contemporary issues of age and pedagogical psychology is presented in the article: the role of family stereotypes in child-upbringing. Parental behavior can be a unique criterion based on which a child compares and builds his / her behavior. Growing up, he/she can not consciously ignore his/her family-specific traits, but subconsciously carry the family's behavioral rules and stereotypes.

РОЛЬ СЕМЕЙНЫХ СТЕРЕОТИПОВ В ДЕТСКО-РОДИТЕЛЬСКИХ ВЗАИМООТНОШЕНИЯХ

Л. Н. КУРКЧЯН
Кандидат педагогических наук, доцент, ГГУ преподаватель
А. В. ВАГАНЯН
Ассистент кафедры педагогики и психологии
Ереванского университета "АЙБУСАК"

В данной статье обсуждается одна из острых проблем возрастной и педагогической психологии: семейные стереотипы и их роль в воспитании детей. Родительское поведение может стать основным критерием подражания для ребенка, который став взрослым, может, сознательно отвергая на подсознательном уровне, воспроизвести поведенческие модели своих родителей.